ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագիրն ուղղված է Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքներում ագրոպարենային ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրականացվող զարգացման ծրագրերի վարկավորմանը:

Ծրագրի պայմաններն են՝

- **5 % տոկոսադրույք,**
- **գյուղատնտեսական կոոպերատիվներին՝ 3 %,**
- **սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %,**
- **վարկի գումարը՝ 3-15 մլն դրամ,**
- **վարկի մարման ժամկետը՝ մինչև 5 տարի,**
- **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ մինչև 12 ամիս:**

Վարկի վաղաժամկետ վճարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

Գործընթաց

Վարկից օգտվելու համար գյուղացիական տնտեսությունը պետք է դիմի ֆինանսական կառույցին: Վերջինիս կողմից ուղղարկված հայտերի հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպվում է տնտեսավարողների հավաստագրման գործընթաց: Հավաստագիր ստանալուց հետո տնտեսավարող սուբյեկտը դիմում է ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին.

- «Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ,
- «Կոնվերս բանկ» ՓԲԸ,
- «Քարդ ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ,
- «Ֆարմ կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ,
- «Կամուրջ» ՈՒՎԿ ՓԲԸ,
- «Հայաստանի զարգացման եվ ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ, «Անիվ» ՈՒՎԿ ՓԲԸ,
- «Ագրոլիզինգ» ԼՎԿ ՍՊԸ:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության պլանավորման և զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 56-12-35, (011) 52-52-32 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ՝ ԼԻԶԻՆԳԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Նշված ծրագրի շրջանակներում գյուղատնտեսությունում տնտեսավարողները հնարավորություն ունեն ձեռք բերելու գյուղատնտեսական տեխնիկա:

Ծրագրի պայմաններն են՝

- **20% կանխավճար,**
- **լիզինգի տարեկան 2 % տոկոսադրույք,**
- **ձեռք բերվող տեխնիկաների արժեքների հանրագումարը 1 տնտեսավարողին՝ 200 մլն դրամ,**
- **մայր գումարի արտոնյալ ժամկետը՝ տարեկան 6 ամիս,**
- **մարման ժամկետը՝**

կոմբայնների համար՝ 10 տարի,

տրակտորների համար՝ 6 տարի,

հավաքիչ-մամլիչների, շարքացանների համար՝ 3 – 6 տարի,

այլ գյուղատնտեսական տեխնիկայի համար՝ 3 տարի:

Ընդ որում տրակտորներ և այլ գյուղտեխնիկա միևնույն շահառուին միաժամանակ լիզինգով տրամադրելու դեպքում մարման ժամկետը կարող է սահմանվել 6 տարի:

Գործընթաց

Գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին.

- **«Հայաստանի Զարգացման և Ներդրումների Կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ**
- **«ՔԱՐԴ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ» ԱԿ**

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության գյուղատնտեսության պլանավորման և զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 56-12-35, (011) 52-52-32 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՓՈՔՐ և ՄԻՋԻՆ «ԽԵԼԱՑԻ» ԱՆԱՍՆԱՇԵՆՔԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ և ԴՐԱՆՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում առաջարկվում է անկապ բոքսային պահվածքով անասնաշենքերի և դրանց տեխնոլոգիական ապահովման 2 տարբերակ.

1. թեթև կոնստրուկցիայով անասնաշենք,
2. այլ տիպի անասնաշենք:

Կառուցման համար առաջարկվում է 3 մոդել՝

ա. 1-ին մոդել՝ 130-280 քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 10-15 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 11 մլն ՀՀ դրամ:

բ. 2-րդ մոդել՝ 281-450 քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 20-25 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 23 մլն ՀՀ դրամ:

գ. 3-րդ մոդել՝ 451 և ավելի քառակուսի մետր արտադրական տարածքով՝ անկապ պահվածքով առնվազն 40-45 գլուխ կենդանու համար: Կառուցման և տեխնոլոգիական ապահովման համար ծախսերը գնահատվում են շուրջ 35 մլն ՀՀ դրամ:

Ծրագրի պայմաններն են՝

- **Կատարված ծախսերի փոխհատուցում.**
  1-ին մոդելի համար՝ 5.5 մլն դրամ,
  2-րդ մոդելի համար՝ 11.5 մլն դրամ,
  3-րդ մոդելի համար՝ 17.5 մլն դրամ,

- **զինվորական ծառայության պարտականությունների կատարման ժամանակ մարտական հերթապահության կամ գործողությունների իրականացման արդյունքում հաշմանդամ դարձած քաղաքացիների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկ-տեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերում գործունեության իրականացնող տնտեսավարողների համար.**
  1-ին մոդելի համար՝ 7.7 մլն դրամ,
  2-րդ մոդելի համար՝ 16.1 մլն դրամ,
  3-րդ մոդելի համար՝ 24.5 մլն դրամ:

Ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ առանց կապալառու կազմակերպության:

Գործընթաց՝

Ծրագրից օգտվելու համար տնտեսավարողը դիմում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, մասնակցում է անասնաբուծության վարման վերաբերյալ դասընթացների:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության պլանավորման և զարգացման վարչություն (հեռ. 011 56-12-35, 011 52-52-32) և անասնաբուծության և անասնաբուժության վարչություն (հեռ. 011 52-93-33) կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր

Ծրագրի շրջանակներում մթերումների կազմակերպման, այդ թվում՝ կանխավճարների տրամադրման նպատակով նպատակային վարկեր են տրամադրվում պտուղբանջարեղեն, խաղող և կաթ մթերող անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին:

Ծրագրի պայմաններն են՝

- **3 % տոկոսադրույք,**
- **սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %,**
- **վարկի գումարը՝ մինչև 1,5 մլրդ դրամ,**
- **վարկի մարման ժամկետը՝ մինչև 1 տարի,**
- **մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 2-3 ամիս:**

Գործընթաց

Ծրագրից օգտվելու համար վերամշակող ընկերությունը գյուղացիական տնտեսությունների հետ պետք է կնքի հումքի գնման պայմանագրեր, որոնց օրինակելի ձևերը տեղադրված են ՀՀ գյուղատնտեսության նախարարության www.minagro.am կայքում:

Վերամշակող ընկերությունը կնքված պայմանագրերով դիմում է ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին.

- **«ԱԿԲԱ-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ**
- **«Ամերիաբանկ» ՓԲԸ, «Արդշինբանկ» ՓԲԸ**
- **«Արմսվիսբանկ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ**
- **«Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
- **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**
- **«Էվոկաբանկ» ՓԲԸ**
- **«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ**
- **«Բիբլոս Բանկ Արմենիա» ՓԲԸ**
- **«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ**
- **«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Քարդ ԱգրոԿրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ**

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ագրովերամշակման զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 23-54-71, (011) 23-01-80 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագիր

Ծրագրի շրջանակներում ագրոպարենային ոլորտներում գործող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց, այդ թվում՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին, հնարավորություն է տրվում լիզինգով ձեռք բերելու անհրաժեշտ սարքավորումներ:

Ծրագրի պայմաններն են՝

- **կանխավճարի չափը՝ 20 %**
- **4 % տոկոսադրույք,**
- **սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի տնտեսավարողներին՝ 0 %,**
- **յուրաքանչյուր լիզինգառուի կողմից ձեռք բերվող սարքավորումների արժեքների հանրագումարը՝ մինչև 450 մլն դրամ,**
- **լիզինգի մարման ժամկետը՝ մինչև 8 տարի,**
- **մայր գումարի մարման արտոնյալ ժամկետ՝ 3 ամիս:**

Ծրագրի շրջանակներում լիզինգի պայմանագրով տնտեսավարողներին տրամադրվում են հետևյալ ոլորտներում օգտագործվող սարքավորումներ՝

անասնաբուծություն, այդ թվում՝ տավարաբուծություն, ոչխարաբուծություն, խոզաբուծություն, թռչնաբուծություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն, արդյունագործական գազանաբուծություն,

բուսաբուծություն, այդ թվում՝ ջերմոցային տնտեսություն,

սառնարանային տնտեսություն, այդ թվում՝ կաթի մթերման կայաններ և կաթ տեղափոխող իզոթերմիկ ցիստերներ,

թարմ պտուղբանջարեղենի և հատիկաընդեղենի տեսակավորման, փաթեթավորման ու հատիկաընդեղենի զտման գործունեություն,

սպանդանոցային տնտեսություն,

ագրովերամշակող արդյունաբերություն,

ագրոպարենային ոլորտի այլ գործունեություն:

Գործընթաց

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին՝

- **«ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ**
- **«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Արմսվիսբանկ» ՓԲԸ**
- **«Կոնվերսբանկ» ՓԲԸ**
- **«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ**
- **«Ամերիաբանկ» ՓԲԸ**

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության ագրովերամշակման զարգացման վարչություն, հեռ.՝ (011) 23-01-80 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2019-2024 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՏԱՎԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակում տնտեսավարող սուբյեկտները հնարավորություն ունեն ձեռք բերել տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ տեղական տնտեսություններից կամ ներկրել այլ երկրներից:

Ծրագրի պայմաններն են՝

- **երինջներ և 14-17 ամսական էգ մատղաշ**
- **2 % տոկոսադրույք,**
- **կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %,**
- **վարկի մարման ժամկետը՝ 5 տարի,**
- **արտոնյալ ժամկետ՝ 1 տարի,**
- **վարկի գումարը՝ առավելագույնը 300 մլն դրամ,**
- **1 գլուխ տոհմային ԽԵԿ-ի հաշվարկային արժեք՝ 1 մլն դրամ**

Գործընթաց

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ ծրագրի շրջանակներում համագործակցության հուշագիր կնքած ֆինանսական կառույցներին՝ ներկայացնելով տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներ ձեռք բերելու վերաբերյալ դիմում-հայտ, նշելով դրանց քանակը, ձեռք բերման վայր(եր)ը (հասցե), ներմուծման դեպքում՝ ներկրման ժամկետները, ինչպես նաև Գյուղատնտեսության նախարարություն է ներկայացնում ձեռք բերման ենթակա խոշոր եղջերավոր կենդանիների տոհմային վկայականները և քարտերը:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անասնաբուծության և անասնաբուժության վարչություն՝ հեռ. *011 52 93 33* կամ զանգահարել թեժ գիծ *055 54 19 68*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐԿՏԱՊԱՇՏՊԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում կսուբսիդավորվեն պտղատու և խաղողի այգիներում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրված նպատակային վարկերի տոկոսադրույքները:

Ծրագրի պայմաններն են՝

- **0,5 – 10 հա խաղողի կամ ինտենսիվ պտղատու այգի**
- **2 % տոկոսադրույք,**
- **կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %,**
- **վարկի մարման ժամկետը՝ 7 տարի,**
- **արտոնյալ ժամկետ՝ մինչև 1 տարի:**

Ծրագիրը կարող է իրականացվել ինչպես կապալառու կազմակերպության միջոցով, այնպես էլ՝ առանց կապալառուի:

Յուրաքանչյուր շահառուին տրամադրվող վարկերի առավելագույն չափերն են՝

ա. Կապալառու կազմակերպության միջոցով տեղակայելու դեպքում՝

- **խաղողի այգի՝ 36 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 85 մլն դրամ:**

բ. Առանց կապալառու կազմակերպության տեղակայելու դեպքում՝

- **խաղողի այգի՝ 28.8 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 68 մլն դրամ:**

Գործընթաց

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին՝

- **«ԱԿԲԱ-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ**
- **«Արմսվիսբանկ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ**
- **«Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
- **«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
- **«Արդշինբանկ» ՓԲԸ**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ**

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն՝ հեռ. 011-52-34-11; 011-52-37-93 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԽԱՂՈՂԻ, ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՄՇԱԿՎՈՂ ԻՆՏԵՆՍԻՎ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՏԱՊՏՂԱՆՈՑՆԵՐԻ ՀԻՄՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Հայաստանի Հանրապետությունում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության ծրագրով նախատեսվում է շահառուներին տրամադրել սուբսիդավորված վարկային միջոց կամ կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում:

Տարբերակ 1.

Եթե ցանկանում եք վերցնել սուբսիդավորված վարկ

Ծրագրի պայմաններն են՝

- **0,5 – 10 հա խաղողի կամ ինտենսիվ պտղատու այգի**
- **0,5 – 3 հա հատապտղանոց**
- **2 % տոկոսադրույք,**
- **նվազագույնը 3 հա այգի հիմնող կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %,**
- **վարկի մարման ժամկետը՝ 8 տարի,**
- **արտոնյալ ժամկետ՝ 5 տարի:**

Ծրագրով նախատեսված է այգեհիմնում և մեկ տարվա խնամք իրականացնել կապալառու կազմակերպության կամ շահառուի միջոցով:

Ծրագրի մեկ շահառուին տրվող վարկի առավելագույն չափերն են՝

ա. եթե այգեհիմնումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը.

- **խաղողի այգի՝ 108 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 144 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 187 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 248 մլն դրամ,**
- **հատապտղանոց՝ 69.6 մլն դրամ (կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ):**

բ. եթե այգեհիմնումն իրականացնում է շահառուն.

- **խաղողի այգի՝ 86 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 115.2 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 149 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 198 մլն դրամ,**

- **հատապտղանոց՝ 55.8 մլն դրամ (կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ):**

Գործընթաց՝

Ծրագրի տարբերակ 1-ից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին՝

- **«ԱԿԲԱ-կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ**
- **«Արմսվիսբանկ» ՓԲԸ, «Ինեկոբանկ» ՓԲԸ**
- **«Կոնվերսբանկ» ՓԲԸ, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
- **«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ**
- **«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ**
- **«Արդշինբանկ» ՓԲԸ**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ**

Տարբերակ 2.

Եթե ցանկանում եք ստանալ ծախսերի մասնակի փոխհատուցում

Ծրագրի պայմաններն են՝

- **0,5 – 5 հա խաղողի այգի,**
- **0,5 – 3 հա հատապտղանոց կամ ինտենսիվ պտղատու այգի,**
- **փոխհատուցման չափը՝ 40 %,**
- **նվազագույնը 3 հա այգի հիմնող կոոպերատիվների և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 50 %:**

Յուրաքանչյուր շահառուին հատկացվող փոխհատուցման առավելագույն գումարը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով 1 հեկտար այգեհիմնման ծախսերի հետևյալ առավելագույն սահմանաչափերը.

ա. եթե այգու հիմնումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը.

- **խաղողի այգի՝ 8.3 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 11.9 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 15.4 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 21.5 մլն դրամ,**
- **հատապտղանոց՝ 17.6 մլն դրամ (կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ):**

բ. եթե այգեհիմնումն իրականացվում է առանց կապալառու կազմակերպության.

- **խաղողի այգի՝ 6.7 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 9. 58 մլն դրամ,**
- **ինտենսիվ պտղատու այգի՝ 11.7 մլն դրամ, կարկտապաշտպան ցանցով՝ 16.6 մլն դրամ,**

- **Հատապտղանոց՝ 14 մլն դրամ (կարկտապաշտպան ցանց նախատեսված չէ):**

Գործընթաց՝

Ծրագրի տարբերակ 2-ից օգտվելու համար, մինչև այգու հիմնումը, էլեկտրոնային կամ թղթային տարբերակով շահառուն դիմում է նախարարություն՝ դիմումին կից ներկայացնելով տեղեկատվություն այգու տեղի, չափերի ու տեսակի վերաբերյալ, ինչպես նաև այգեհիմնման ծախսերի համապատասխան հաշվարկներ:

Նախարարության համապատասխան ստորաբաժանումները դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացված տեղեկատվության համաձայն ուսումնասիրում են այգու տեղանքը, հողի օգտագործման իրավունքը հավստիացնող փաստաթղթի առկայությունը և համապատասխանության կամ անհամապատասխանության մասին տեղեկացնում շահառուին:

Այգու հիմնման աշխատանքների ավարտից հետո շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է ՀՀ գյուղատնտեսության նախարարություն:

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչություն՝ հեռ. 011-52-34-11; 011-52-37-93 կամ զանգահարել թեժ գիծ 055 541968

ՈՌՈԳՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Գյուղատնտեսական մշակաբույսերով զբաղեցված տարածքներում՝ բացառությամբ ջերմատների և ջերմոցային տնտեսությունների, ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար պետական աջակցության ծրագրով նախատեսվում է շահառուներին տրամադրել սուբսիդավորված վարկային միջոց կամ կատարված ծախսերի փոխհատուցում:

Շահառուի հայեցողությամբ՝ կաթիլային կամ անձրևացման համակարգերը (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց և բաշխիչ ցանց) **կարող են տեղադրվել կամ կապալառու կազմակերպության կամ շահառուի կողմից**:

Յուրաքանչյուր շահառուին հատկացվող վարկի կամ փոխհատուցման առավելագույն գումարը հաշվարկվում է 1 հա հողատարածքում, անկախ մշակաբույսից, ոռոգման արդիական համակարգերի ներդրմանն ուղղված ծախսերի հետևյալ առավելագույն սահմանաչափերի համար.

ա. եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացնում է կապալառու կազմակերպությունը (հաշվի են առնվում նաև սխեմայի կազմման և ներդրման աշխատանքները)՝

- **կաթիլային ոռոգման համակարգի համար՝ 2.2 մլն դրամ,**
- **անձրևացման համակարգի համար՝ 2.7 մլն դրամ,**

բ. եթե ոռոգման արդիական համակարգերի ներդրումն իրականացվում է առանց կապալառու կազմակերպության (հաշվի են առնվում միայն կապիտալ ծախսերը).

- **կաթիլային ոռոգման համակարգի համար՝ 1.6 մլն դրամ,**
- **անձրևացման համակարգի համար՝ 1.9 մլն դրամ:**

<u>Տարբերակ 1-ին</u>

Եթե ցանկանում եք վերցնել սուբսիդավորված վարկ.

Ծրագրի պայմաններն են՝

- **2 % տոկոսադրույք,**
- **առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին, գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 0 %,**
- **վարկի առավելագույն գումարը՝ 150 մլն դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 110 մլն դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում,**
- **վարկի մարման ժամկետը՝ մինչև 3 տարի,**
- **արտոնյալ ժամկետ՝ տարեկան մինչև 6 ամիս:**

Վարկի վաղաժամկետ վճարման դեպքում տույժեր և տուգանքներ չեն սահմանվում:

Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է դիմել ծրագրի մասնակից ներքոնշյալ ֆինանսական կառույցներին՝

- **«ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ**
- **«Արմսվիսբանկ» ՓԲԸ,**
- **«Ինեկոբանկ» ՓԲԸ,**
- **«Կոնվերսբանկ» ՓԲԸ,**
- **«Հայաստանի զարգացման և ներդրումների կորպորացիա» ՈՒՎԿ ՓԲԸ,**
- **«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ,**
- **«Արդշինբանկ» ՓԲԸ,**
- **«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ ԱԿ:**

<u>Տարբերակ 2-րդ</u>

Եթե ցանկանում եք ստանալ ծախսերի փոխհատուցում.

Ծրագրի պայմաններն են՝

- **փոխհատուցման չափը՝ 16 %,**
- **առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին, գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում և սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ բնակավայրերի համար՝ 18 %,**
- **փոխհատուցվող առավելագույն գումարը՝ 10 մլն դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 8 մլն դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում,**
- **փոխհատուցվող առավելագույն գումարը առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 27 մլն դրամ՝ աշխատանքները կապալառուի միջոցով իրականացնելու դեպքում, 20 մլն դրամ՝ աշխատանքներն առանց կապալառուի իրականացնելու դեպքում:**

Գործընթաց

Փոխհատուցման գործընթացը նախաձեռնում են գյուղատնտեսությունում տնտեսավարողները՝ մինչ համակարգերի ներդրմանն ուղղված հիմնական միջոցների ձեռքբերումն ու ներդրման աշխատանքների սկսվելն էլեկտրոնային և (կամ) թղթային տարբերակով դիմելով նախարարություն՝ որպես շահառու ծրագրին մասնակցելու համար համաձայնություն ստանալու նպատակով:

Նախարարության համապատասխան ստորաբաժանումները դիմումը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված տեղեկատվությունը և ծրագրին մասնակցելու համար համաձայնություն տալու մասին որոշումը էլեկտրոնային կամ թղթային տարբերակով տրամադրում դիմումատուին: Համաձայնություն չտալու դեպքում դիմումատուին են տրամադրվում դիմումը մերժելու հիմքերը:

Ոռոգման արդիական համակարգերի ներդրման աշխատանքների ավարտից հետո շահառուն փոխհատուցում ստանալու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացնում դիմում՝ համապատասխան փաստաթղթերով:

Նախարարությունը դիմումը ստանալուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում փոխհատուցման ենթակա գումարը փոխանցում է շահառուի համապատասխան հաշվին, եթե դիմումը համապատասխանում է ծրագրի պահանջներին:

Փոխհատուցման ենթակա գումարը փոխանցվում է շահառուի տնտեսությունում կատարված աշխատանքների ուսումնասիրության նպատակով նախարարության կողմից իրականացված մոնիթորինգից հետո:

Ծրագրի մասնակից կապալառու կազմակերպություններ՝

- «ԱԳՐՈԻՆՏԵՔՍ» ՍՊԸ
- «ԱՐՏԱԳՐՈ» ՍՊԸ
- «ՎԵՍՏ ՊԼԱՍՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
- «ՆՅՈՒՊԼԱՍՏ» ՓԲԸ
- «ԳՐԻՆ ԱԳՐՈ» ՍՊԸ
- «ԱՐՄՊԼԱՍՏ» ՓԲԸ
- «ԻՐԻԳԵՅԹ» ՍՊԸ
- «ՆՈՐԱՏՈՒՆԿ» ՓԲԸ
- «ՍՈԼԻՆԻԴ» (NETAFIM)
- «ԴՐԻՊԱՐՏ» ՍՊԸ
- «ԱՍՇԻՆ» ՍՊԸ
- «ԷԿՈՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ
- «ԵՐԻՑՅԱՆ» ՍՊԸ
- «ԱՐՇԱՆԴ» ՍՊԸ
- «ԹԵՐՄՈ ԴԻԱԳՆՈԶ» ՍՊԸ
- «ԻՌԱՏԵԿ» ՍՊԸ
- «Մ-ՕԱԶԻՍ» ՍՊԸ

Հավելյալ տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել http://www.minagro.am/ պաշտոնական կայք էջ, դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն՝
հեռ. 011-29 74-35; 011-29-74-33 կամ զանգահարել թեժ գիծ *055 54 19 68*